

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



Այս համարում

Հայերեն բաժին

1- Իրանահայ Համայնք.....	1
2- Հայաստան.....	2
3- Արցախ.....	9
4- Արեւմտյան Հայաստան.....	10
5- Միջազգային.....	12
6- Միջուկ.....	15
7- Խոհեր.....	16
8- Գծանկարչություն.....	17
9- Առածանի.....	17

Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-3
----------------	-----



Ճապիկի առաջին էջում՝ << Եւ Արցախի անկախությունը
Վերջին էջում՝ Լույս են տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 191, Սեպտեմբեր 2014 թ.

No. 191, September 2014

ماهنامه لویس - شماره ۱۹۱ مهر ماه ۱۳۹۳

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

Հայաստանի եւ Արցախի անկախության հռչակագրերը*

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբը դրվեց: Իսկ 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Արցախի անկախությունը:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀնՄՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն (Հայաստան): Այսպիսով, Հայաստանի պատմության մեջ սկսվում էր երրորդ հանրապետության շրջանը: Կարելի է նշել, որ թեև Խորհրդային Հայաստանը դեռևս հՄՀՄ կազմում էր եւ չէր օգտվում իրական պետական անկախությունից, սակայն այդ շրջանում ձեռք բերված հաջողությունների հիմքի վրա էր, որ հնարավոր եղավ կյանքի կոչել երրորդ հանրապետությունը:

Հռչակագրի հատուկ հոդվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը հՄՀՄ օրենքների նկատմամբ: Եթե հՄՀՄ տվյալ օրենքը հավանու-թյուն չէր ստանում Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, ապա այն չէր կարող գործել հանրապետությունում: Պետական գրոշ հաստատվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջա-գույն, որն առաջին հանրապետության գրոշն էր: Այնուհետև ընդունվեց նոր պետականության մյուս խորհրդանիշը՝ զինանշանը, որը նույնպես առաջին հանրապետության խորհրդանիշն էր: Հայաստանը պետք է վարեր ակտիվ արտաքին քաղաքականություն, ունենար իր դիվանագիտական ներկայացուցչությունները տարբեր երկրներում:

Փաստաթղթի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, նրա ընդերքը, ձեռնարկությունները համարվում են հայ ժողովրդի սեփականությունը: Երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լինեն մասնավոր սեփականատիրական եւ ազատ շուկայական հարաբերությունները: ՀՀ-ն պետք է ունենար սեփական դրամական համակարգ:

Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի, իբր եւ պետական լեզվի, կիրառման հարցին: Հանրապետությունում ներքին ամբողջ գործավարությունը պետք է կատարվեր միայն հայերենով:

Հռչակագիրն արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն: Վերականգնվում էին Հայ առաքելական եկեղեցու իրավունքները:

Մինչ եւ նոր սահմանադրության ընդունումը հռչակագիրը ծառայելու էր իբր եւ ծրագրային փաստաթուղթ:

*- Էդ. Բաղդասարյան, Հայկական հարցը, Հատոր 2, Տորոնտո, 2014, էջ 282-283.

Իրանահայ Համայնք

Սբ. Թադէի ուխտագնացութիւնների 60-րդ օդակը հաւատքի ամուր մանեակը ամրացրեց համայն հայութեան վզին



Ղեկի Ս. Թադէ կատարած հաւատքի ուխտագնացութիւնների վերսկսման 60-րդ տարեդարձը կատարելով, ինչպէս նաեւ Ատրպատականի Հայոց Թեմի հիմնադրութեան 770-ամեակը տօնախմբելով, ընդհանրապէս Իրանահայութիւնը եւ մասնաւորապէս Ատրպատականի հայութիւնը ապրեցաւ պատմական օրեր, եռօրեայ կեցութեամբ Վանքի վեհավայրում, 31 Յուլիսից մինչեւ 2 Օգոստոս 2014:

Հովանաւորութեամբ Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Գերբ. Տ. Գրիգոր Ս. Եպս. Չիֆթճեանի եւ Թեմական Խորհրդի, 60-րդ տարին լինելով Իրանի տարբեր քաղաքներից եւ արտասահմանից մեծաթիւ ուխտաւորներ ժամանեցին Ս. Թադէի Վանքը, ժամասացութեամբ, Սբ. Պատարագով եւ ազգային ժողովրդական տօնախմբութեամբ կատարելու Սբ. Թադէոս Առաքելի եւ Ս. Սանդուխտ Կոյսի սօժը:

Թեմական Խորհրդի հովանաւորութեամբ, Վանքերի ուխտագնացութեան յանձնախմբի ջանքերով եւ 60-ամեակի առիթով կեանքի կոչւած մշակութային յատուկ յանձնախմբի աշխատանքով, եռօրեայ ուխտագնացութեան ծրագիր պատրաստել էր, որը կիրարկեց հետեւեալ հերթականութեամբ:-

ա. Ժամանում եւ Առաջին օր՝ Հինգշաբթի 31 Յուլիս

Պետական համապատասխան մարմինների հետ համախորհուրդ, ուխտաւորների ժամանման թրակն նկատի առնել էր Հինգշաբթի 31 Յուլիսի օրը: Նախապէս Վանքի շրջապատում լարած հարիւրաւոր վրանների պահովումը կատարած լինելով, ուխտաւորներ տեղաւորեցին, նախապատրաստելով առաջիկայ երկու օրերի ծրագրերին:

60-ամեակի մշակութային յանձնախմբի կողմից ուխտաւորների երեխաների յատուկ ծրագրեր՝ խաղեր եւ մրցոյթներ էին կազմակերպել, ինչպէս շախմատի մրցոյթին, ուրախ ժամանց եւ ազատ բեմ եւ այլ հաճելի խաղեր, որպէս սկիզբ ազգային խանդավառ ուխտաւորութեան: Յայտնեք, թէ 60-ամեայ ուխտագնացութիւնների շարանը պատկերացնող լուսանկարների ցուցահանդէս եւ կազմակերպել էր Տաճարի արեւմտեան շրջափակում, ցոյց տալու յատկապէս այն հաւատքը, որը ունեցել են Ատրպատականի անցած սերնդի

զաւակները, Վանքում բնակութեան անյարմար օրերին հիմը դնելով ուխտագնացութեան: Լուսանկարները պատկերացում էին տալիս այն դժարին պայմաններին՝ ճանապարհի չզոյրութեան, ջուրի մատակարարման դժարութեան, վրանների խեղճութեան ու մանաւանդ փոխադրամիջոցների անյարմարութեան մասին, եւ սակայն ժողովուրդը սիրով ընդառաջել էր Թեմական Խորհրդի հրաւերին, ու իր մասնակցութեամբ կեանք եւ շունչ տուէր դարաւոր վանքի սրբատաշ քարերին:

Օրւայ արարտին, հոգեւոր հայրերի կողմից որպէս գոհաբանութիւն, կատարեց երեկոյեան ժամերգութիւն, բարեպաշտ հաւատացեալների աղօթական ներկայութեան:

բ. Ուրբաթ 1 Օգոստոս

Ուխտագնացութեան երկրորդ օրը բացեց առաւօտեան ժամերգութեամբ, երբ շրջակայ լեռներում դարձեալ զնգաց Ս. Թադէի մելանոյշ գանգը, վրանաքաղաքի բարեպաշտ ժողովրդին հրաւիրելով աղօթքի ու Աստծուն փառաբանելու երջանիկ պահուան:

Տաճարի շրջափակում գետեղած յատուկ տաղաւարների ներքեւ վաճառում էին նաեւ այս տարւայ համար պատրաստած յուշանւերներ, Ս. Թադէի վանքի պատկերով վերնաշապիկներ, մանուկների համար փուչիկներ, պնակների մէջ Թաւրիզահայ արեւտագիտուհի Անայիս Սալաֆեանի կողմից նկարած Ատրպատականի վանքերի պատկերներ, ինչպէս նաեւ տարբեր յուշանւերներ, վիճակախաղի յատուկ զարդեր եւ պարգէներ, որոնց բոլորի հատոյթից գոյացած գումարը յատկացելու է Թեմի վանքերի բարեզարդման ու պահպանման:

Նոյն օր դարձեալ շարունակեցին երեխաների յատուկ մրցոյթիւններ եւ պարգէներ բաշխեցին յաղթողներին:

Ապա, երեկոյեան Վանք ժամանեցին Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերբ. Տ. Սեպուհ Ս. Արք. Սարգիսեանն ու Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Գերբ. Տ. Գրիգոր Ս. Եպս. Չիֆթճեանը: Ժողովրդական դիմաւորութիւն տեղի ունեցաւ Վանքի հիւսիսային դռան առաջ, եւ աղ ու հացի օրհնութիւնից յետոյ, Սրբազան հայրերը ուղղեցին դէպի Տաճար որտեղ կատարեց կանոնական աղօթքը: Այս առիթով Առաջնորդ Սրբազանը բարի գալստեան խօսք ուղղեց Թեհրանի Հայոց Առաջնորդին, որը նաեւ իր սրտի խօսքը փոխանցեց ուխտաւորներին:

գ. Գեղարեւտական ծրագիր

Նոյն գիշեր ժամը 9.30-ին, Տաճարի սրբազան կամարների ներդաշնակ դարաւոր արձագանգի խորհրդաւորութեան մէջ, Ատրպատականի Հայոց Թեմի «Կոմիտաս» երգչախումբը Սրբազան համերգով հանդէս եկաւ, ղեկավարութեամբ երաժիշտ-խմբավար Վարդան Վահրամեանի:

դ. Պետական յարգանք Հայ Ուխտաւորին

Շաբաթ 1 Օգոստոսի առաւօտուն, Վանքի ճանապարհին կանգնած հսկայ վրանում, պետական բարձրատիճան պատասխանատուներ գլխաւորութեամբ Զալդրանի Կուսակալ Հունէնգադէի, յատուկ յարգանք ընծայեցին մեր ժողովրդի զաւակներին, ուխտագնացութեան այս առիթով:

ե. Ս. Պատարագ եւ Մասունքների Թափօր

Պետական յարգանքից յետոյ, եկեղեցու գանգի դօղանջի ներքոյ, հոգեւորականաց դասը զգեստաւորւած շարժեց դէպի Տաճար: Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերբ. Տ. Սեպուհ Ս. Արք. Սարգիսեան: Խորանին էին սպասարկում Ատրպատականի Հայոց Թեմի քահանայ հայրեր՝ Արժ. Տ. Ներսէս Պասիլեան եւ Արժ. Տ. Առաքել Տնտմեան: Իսկ խորանից երգում էր Արժ. Տ. Կոմիտաս Թորոսեան:

Հայաստան

«Նախագահը հարգանքի տուրք է մատուցել Արցախի անկախության համար զոհված հայորդիների հիշատակին»



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Մտեփանակերտում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի, Արցախի Հանրապետության հռչակման 23-րդ տարեդարձին մասնակցելու նպատակով Հայաստանից ժամանած պաշտոնական պատվիրակության, արցախահայության և արտերկրից ժամանած հյուրերի հետ Վերածննդի հրապարակից հանդիսավոր քայլերթով այցելել է Մտեփանակերտի հուշահամալիր:

Սերժ Սարգսյանը հարգանքի տուրք է մատուցել Արցախի անկախության համար զոհված հայորդիների հիշատակին, ծաղիկներ դրել ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի և արցախյան ազատամարտի նահատակների շիրիմներին:

Հովիկ Աբրահամյանի շնորհավորական ուղերձը ԼՂՀ վարչապետին՝ ԼՂՀ Անկախության օրվա առթիվ



Հարգաբաժան պարոն Հարությունյան, Հայաստանի Հանրապետության կառավարության և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ և Արցախի ժողովրդին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության տոնի կապակցությամբ:

Հանուն ազատության մղած պայքարի ընթացքում Արցախի անկախության նվաճումը հայոց պատմության

մեծագույն ձեռքբերումներից է, որը հնարավոր դարձավ հայության բոլոր հատվածների միասնականության, հայ զինվորի անպարտ ոգու և ինքնուրույն իր ճակատագիրը տնօրինելու հայ ժողովրդի հաստատուն կամքի դրսևորման շնորհիվ:

Վստահ եմ, որ Արցախի ժողովրդի վճռականությունն ու իշխանությունների կողմից իրականացվող հետևողական քայլերը մոտ ապագայում կհանգեցնեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանը՝ առավել ևս, որ ժողովրդավարական համակարգի հաստատմամբ և միջազգային իրավունքի հարգմամբ այն վաղուց է նվաճել համաշխարհային մեծ ընտանիքի անդամ դառնալու իրավունքը:

Կրկին շնորհավորելով Անկախության օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ Ձեզ, պարոն վարչապետ, նորանոր հաջողություններ պետականության ամրապնդման գործում, իսկ արցախցիներին՝ խաղաղություն և բարեկեցություն:

Արցախը պետք է լինի համայն հայության պարծանքը. Բակո Սահակյան



Արցախի Հանրապետության նախագահի նստավայրում այսօր՝ սեպտեմբերի 2-ին, տեղի է ունեցել ԼՂՀ հռչակման 23-րդ տարեդարձի կապակցությամբ պարզեւատրման հանդիսավոր արարողություն:

Ինչպես տեղեկանում ենք նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից, արարողության ժամանակ Բակո Սահակյանն ընդգծել է, որ անկախության այս 23 տարիները եղել են դիմակայության ու մաքառումների, պետականաշինության ու կայացման տարիներ, որոնց ընթացքում մենք ազգովի պաշտպանել ենք Արցախի ազատությունն ու անկախությունը, Մայր Հայաստանի եւ Սփյուռքի աջակցությամբ աշխատանքներ տարել պատերազմի հետեւանքների ու ավերածությունների վերացման ուղղությամբ եւ կանգնել կայուն զարգացման ուղու վրա:

«Մենք հաստատական ենք ու վճռական՝ շարունակելու մեր ընտրած ուղին, շարունակելու այն բարձր գիտակցումով, որ Արցախը պետք է լինի կայուն, հզոր, զարգացած ու ժողովրդավարական երկիր, որը կարող է արժանիորեն ներկայանալ աշխարհին եւ լինել համայն հայության պարծանքը: Համատեղ ուժերով պետք է անել հնարավորն այդ նպատակները կյանքի կոչելու համար»,- իր խոսքում նշել է Բակո Սահակյանը:

Նախագահը գոհունակությամբ է ընդգծել, որ գնալով նոր թափ է ստանում Արցախի միջազգային ճանաչման

գործընթացն՝ այս համատեքստում ամբողջ հայության համար մեծ իրադարձություն համարելով վերջերս Քալիֆորնիայի կողմից Արցախի անկախության ճանաչումը, որը կարելուք քաղաքական, իրավական եւ բարոյական քայլ է: Երկրի ղեկավարը շնորհավորել է բոլոր պարզեւատրվածներին ու ներկաներին Արցախի Հանրապետության հռչակման 23-րդ տարեդարձի կապակցությամբ եւ մաղթել նրանց քաջառողջություն, երջանկություն, խաղաղություն ու բարեկեցություն:

Միջոցառմանը ներկա էին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլսյանը, պաշտոնատար այլ անձինք:

Նալբանդյանը կարճ զրույց է ունեցել Էրդողանի հետ



Օգոստոսի 28-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Անկարայում ներկա է գտնվել Թուրքիայի նորընտիր Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի պաշտոնի ստանձնման արարողությանը:

ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ Չանկայայի նախագահական պալատում կայացած Թուրքիայի նախկին նախագահ Աբդուլլահ Գյուլից Ռեջեփ Թայիփ Էրդողանին իշխանության փոխանցման արարողությանը մասնակցում էին մի քանի տասնյակ երկրների բարձրաստիճան պատվիրակություններ:

Արարողությունից հետո պատվիրակությունների ղեկավարների պատվին տրված ընդունելությանը նախարար Նալբանդյանը կարճատև զրույց է ունեցել նախագահ Էրդողանի հետ, որին հանձնել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական հրավերը՝ 2015թ. ապրիլի 24-ին ներկա գտնվելու Երևանում կայանալիք Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը:



Պատգամավոր. 2015-ի ապրիլի 24-ին Երեւան այցով Էրդողանը կճանաչի ցեղասպանությունը



Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին ուղղված հրավերը՝ Հայաստան այցելել 2015-ի ապրիլի 24-ին, քայլ է, որը Թուրքիային պատասխին իրավիճակի մեջ կդնի, եւ Հայաստանի համար դրական դրություն կստեղծի: Այս մասին, այսօր՝ սեպտեմբերի 2-ին, ԱԺ-ում արտաքին քաղաքականության հարցերով փակ քննարկումից հետո լրագրողների հետ զրույցում նշել է անկախ պատգամավոր Էդմոն Մարուքյանը:

Նա պարզաբանել է, որ եթե Էրդողանը ժամանի Հայաստան, դա խնդիր կլինի Թուրքիայի համար: Եթե այցելությունը չկայանա, դա կրկին խնդիր կլինի Անկարայի համար: «Եթե Թուրքիայի նախագահը գա Հայաստան, իր այցելությամբ նա կճանաչի Հայոց ցեղասպանությունը», - կարծիք է հայտնել Մարուքյանը:

Հիշեցնենք, որ օգոստոսի 28-ին, Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ներկա է եղել Էրդողանի երդմնակալության արարողությանը, որի ժամանակ նրան է հանձնել 2015-ի ապրիլի 24-ին Երեւան այցելելու Սերժ Սարգսյանի հրավերը:

Ներկայացվել է Հայաստանում Իրանի նորանշանակ ռազմական կցորդը



Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն, այսօր՝ օգոստոսի 29-ին, արարողակարգային հանդիպում է ունեցել Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մոհամմադ Ռեիսիի, ՀՀ-ում ռազմական կցորդի ղիվանագիտական առաքելությունն ավարտած գնդապետ Համիդ Ռեզա Միրզայի և նորանշանակ ռազմական կցորդ, գնդապետ Սեյեդ Հոսեյն Վահիդի Շեյխի

հետ: Դեսպան Ռեխին ՀՀ պաշտպանության նախարարին ներկայացրեց նորանշանակ ռազմական կցորդին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են հայ-իրանական բազմակողմ համագործակցությանը վերաբերող, երկկողմ հետաքրքրություն ներկայացնող, ինչպես նաև տարածաշրջանային խնդիրներին ու հակամարտությունների կարգավորմանն առնչվող հարցեր:

Հանդիպման ավարտին ՀՀ պաշտպանության նախարարը գնդապետ Համիդ Ռեզա Միրզայիին շնորհակալություն է հայտնել կողմերի պաշտպանական գերատեսչությունների համագործակցության զարգացմանը նպաստելու համար, իսկ նորանշանակ ռազմական կցորդին հաջողություն մաղթել մեր երկրում իր հետագա ծառայությունն իրականացնելու ընթացքում:

Հայաստանը մեծացրել է ձկնկիթի արտահանումը Ռուսաստան. տանն ավելի քիչ են ուտում



2014թ. առաջին կիսամյակում Հայաստանը ավելացրել է ձկնկիթի արտահանումը Ռուսաստան: NEWS.am-ի թղթակցի հետ գրույցի ընթացքում հայտարարեց Հայաստանի ձկնաբույծների միության նախագահ Արթուր Աթոյանը՝ հավելելով, որ Հայաստանում արտադրությունը նույնն մակարդակում է, իսկ ասիա սպառումը նվազել է: Արդյունքում ձկնաբույծների մոտ չիրացված ավելցուկ է առաջացել:

«Մեր արտադրողներն էլ արտահանում են Ռուսաստան, որտեղ պահանջարկ կա: Ինչին մենք, իհարկե, շատ ուրախ ենք», - ավելացրել է Աթոյանը:

Նշենք, որ եթե 2013թ. առաջին կիսամյակում Հայաստանը ընդամենը 480 կգ ձկնկիթ է Ռուսաստան արտահանել, ապա այս տարի՝ ավելի քան 14 հազար տոննա:

Տնտեսագետ. «Նաիրտը» կարելի է միացնել իրանական գազային բարտերին

«Նաիրտի» գործարանը լիովին կարելի է միացնել իրանական գազային բարտերին: Այսօր՝ սեպտեմբերի 2-ին, լրագրողներին իր կարծիքը հայտնեց Հայաստանի հայրենական ապրանք արտադրողների միության նախագահ Վազգեն Սաֆարյանը: Նրա խոսքով՝ «Նաիրտը» եւ Երեւանի ՋԷԿ-ը, որն այսօր գազի դիմաց էլեկտրակախություն է արտահանում Իրան, կարելի է միավորել Երեւանի Հարավային արդյունաբերական

հանգույցին: «Նաիրտը» իր կաուչուկի մի մասը կարող է փոխանակել գազով, իսկ մնացածը վաճառել՝ տոննայի դիմաց 6 հազար դոլարով:



Սաֆարյանը նշեց, որ արտադրության վերականգնման դեպքում, «Նաիրտը» տարեկան 100-120 մլն խմ գազ կօգտագործի, այն դեպքում, երբ Երեւանի ՋԷԿ-ն արդեն օգտագործվում է 480-ը: Իսկ սա նշանակում է, որ նշված սխեմայի ընդլայնումը ոչ այդքան մասշտաբային է եւ լիովին իրատեսական:

Հիշեցնենք, որ «Նաիրտ գործարան» ՓԲԸ-ն 2010թ. ապրիլից դադարեցրել է արտադրությունը: 2013թ. հաղորդվել էր ռուսական «Ռոսնեֆթի» կողմից գործարանում ներդրումներ կատարելու ծրագրերի մասին:

Արցախի քայլերը մոտ ապագայում կհանգեցնեն ԼՂՀ միջազգային ճանաչմանը. ՀՀ վարչապետ



Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը շնորհավորական ուղերձ է հղել ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության օրվա առթիվ:

Կառավարության մամուլի ծառայությունից հայտնում են, որ ՀՀ վարչապետի ուղերձում ասվում է.

«Հարգաբաժան պարոն Հարությունյան, Հայաստանի Հանրապետության կառավարության եւ անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում են Ձեզ եւ Արցախի ժողովրդին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության տոնի կապակցությամբ:

Հանուն ազատության մղած պայքարի ընթացքում Արցախի անկախության նվաճումը հայոց պատմության մեծագույն ձեռքբերումներից է, որը հնարավոր դարձավ հայության բոլոր հատվածների միասնականության, հայ զինվորի անպարտ ոգու և ինքնուրույն իր ճակատագիրը տնօրինելու հայ ժողովրդի հաստատուն կամքի դրսևորման շնորհիվ:

Վստահ եմ, որ Արցախի ժողովրդի վճռականությունը ու իշխանությունների կողմից իրականացվող հետետեղական քայլերը մոտ ապագայում կհանգեցնեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանը՝ առավել ևս, որ ժողովրդավարական համակարգի հաստատմամբ և միջազգային իրավունքի հարգմամբ այն վաղուց է նվաճել համաշխարհային մեծ ընտանիքի անդամ դառնալու իրավունքը:

Կրկին շնորհավորելով Անկախության օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ Ձեզ, պարոն վարչապետ, նորանոր հաջողություններ պետականության ամրապնդման գործում, իսկ արցախցիներին՝ խաղաղություն և բարեկեցություն»:

Բնապահարարությունում քննարկվել են փոքր ՀԷԿ-երի խնդիրները



Հայաստանի բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանն այսօր «Փոքր ՀԷԿ-երի խնդիրները ՀՀ-ում» թեմայով խորհրդակցություն է հրավիրել, որին մասնակցել են փոքր ՀԷԿ-երի միության նախագահ Նաիրա Նահապետյանը, հանրապետության 22 ՓՀԷԿ-երի, ինչպես նաև խնդրով մտահոգ հասարակական կառույցների ներկայացուցիչներ՝ Համահայկական բնապահպանական ճակատի անդամ Լևոն Գալստյանը և «Էկոլուր» հասարակական կազմակերպության նախագահ Ինգա Չարաֆյանը:

Վերջինները լրատվամիջոցներով պարբերաբար բարձրաձայնում են հանրապետության տարբեր գետերի վրա տեղակայված ՓՀԷԿ-երի առաջացրած բնապահպանական խնդիրների և այս ոլորտի վերանայման ու բարեփոխման անհրաժեշտության հարցերը:

Ընդգծելով ՓՀԷԿ-երի գործունեության կարևորությունը Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում՝ նախարարը, այնուամենայնիվ, նշել է, որ այսօր լուրջ խնդիրներ ունենք. կան ՓՀԷԿ-եր, որոնք գործում են որոշակի նախագծային շեղումներով, չեն պահպանում սահմանված ջրի թույլտվությունը, չեն պահպանվում Էկոլոգիական թողբերը այն:

Փոքր ՀԷԿ-երի միության նախագահ Նաիրա Նահապետյանի խոսքով, ՓՀԷԿ-երը ռազմավարական նշանակություն ունեն մեր երկրի համար, Հայաստանի

զարգացած ու կարևորագույն ոլորտներից են և պետք է առանձին դեպքերի բացթողումները տարածել բոլորի վրա. «Մենք պետք է անենք հնարավորը՝ այս ոլորտի կայուն զարգացումն ապահովելու համար, քանի որ մենք տեսել ենք 1990-ականների հոսանքազրկումները և գիտակցում ենք ՓՀԷԿ-երի կարևորությունն էներգետիկայի ոլորտի կայուն զարգացման համար»:

Բնապահպանության նախարարության պատասխանատու պաշտոնյաներն իրենց հերթին ներկայացրել են մասնագիտական դիտողությունները և փոքր ՀԷԿ-երի նախագծման ու շահագործման ընթացքում վերանայման ու փոփոխության կարիք ունեցող դրույթները: Բնապահպանական պետական տեսչության պետի տեղակալ Մարգարետ Քամայանի խոսքով, ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման ժամանակ նախարարության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս գործընթացի տարբեր փուլերում առաջանում են բնապահպանական լուրջ խնդիրներ, որոտը դարձել է բարձր ռիսկայնության, իսկ հասարակության դժգոհությունը գնալով մեծանում է:

«Վերջին 4 ամսում իրականացվել են 18 ՓՀԷԿ-երի ստուգումներ, կայացվել է 1.7 մլն դրամի վարչական տուգանքի որոշում, իսկ շրջակա միջավայրին հասցրած վնասը հաշվարկվել է շուրջ 474 մլն դրամ: Թիրախային դաշտում են հայտնվել Տավուշի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Սյունիքի և Լոռու մարզերի ՓՀԷԿ-երը», - տեղեկացրել է Մարգարետ Քամայանը:

«Էկոլուր»-ի նախագահ Ինգա Չարաֆյանը փոքր ՀԷԿ-երի կողմից սցիալական և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացման նպատակով առաջարկել է օգտվել «Փոքր ՀԷԿ-երի կայուն զարգացում էներգիայի հուսալիության համար» նորվեգահայկական համագործակցության ծրագրի շրջանակում մշակված առաջարկներից:

«Օգնիր եզդիներին». Բարեգործական համերգ ԱԺ այգում



Հայաստանի Ազգային ժողովի աջակցությամբ «Օգնիր եզդիներին» հասարակական նախաձեռնությունը սեպտեմբերի 4-ին՝ ժամը 19.00-ին, խորհրդարանի այգում կազմակերպում է բարեգործական համերգ՝ եզդի ժողովրդին գորակցելու նպատակով:

ԱՄ մամուլի ծառայությունից հայտնում են, որ համերգին կմասնակցեն Արտո Թունջրոյաջյանը, Progressive music act, Aram mp3, «Ոստան հայոց», «Բամբինո», Dorians, Empyray, The beautified project խմբերը:

100 հազար դոլար. Հայաստանի օգնությունը Իրաքի եզդիներին



Սեպտեմբերի 2-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը՝ Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Բրեդլի Բուզետտոյի, Եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանի, Հայաստանի եզդիների հոգևոր առաջնորդ շեյխ Բրո Հասանյանի ներկայությամբ, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿԳՀ) հայաստանյան ներկայացուցիչ Քրիստոֆ Բիերվիթին հանձնեց ՄԱԿ-ի ՄԱԿԳՀ-ի ժնեյան կենտրոնակայանի հաշվեհամարին ՀՀ կառավարության կողմից Իրաքում ծայրահեղականների գործողությունների հետևանքով տուժած և իրենց բնակավայրերից տեղահանված եզդիներին օգնություն տրամադրելու նպատակով 100 հազար ԱՄՆ դոլարի փոխանցման մասին հայտագիրը:

Միջոցառմանը, դիմելով ներկաներին, արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ասաց. «Կերջին շաբաթների ընթացքում աշխարհի ուշադրության կենտրոնում են Իրաքում ծայրահեղականների կողմից կրոնական և ազգային փոքրամասնությունների դեմ իրականացվող զանգվածային ոճրագործությունները: Բռնությունների հետևանքով բնակության մշտական վայրերից տեղահանվել են հազարավոր խաղաղ բնակիչներ՝ եզդիներ, քրիստոնյաներ, մահմեդականներ: Բռնությունները բազմաթիվ գոհերի պատճառ են դարձել:

Հանրապետության նախագահի հանձնարարությամբ՝ արտգործնախարարությունը համապատասխան քայլեր է ձեռնարկել. Հայաստանի ներկայացուցիչները միջազգային կազմակերպություններում բարձրաձայնել են խնդրի հրատապության և միջազգային հանրության կողմից անհապաղ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտության մասին: Հայաստանը համահեղինակել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդում սեպտեմբերի 1-ին ընդունված համապատասխան բանաձեռը:

Հայաստանի ժողովուրդը և իշխանությունները կիսում են եզդի համաքաղաքացիների անհանգստությունը և վրդովմունքը՝ տեղի ունեցող ողբերգական զարգացումների կապակցությամբ:

Ինչպես տեղյակ եք, Հայաստանի կառավարությունը որոշում է կայացրել՝ Իրաքում տեղահանված եզդիներին 100000 ԱՄՆ դոլարի չափով օժանդակություն ցուցաբերելու մասին, և այսօր ՄԱԿ-ի փախստականների գրասենյակի Հայաստանի ներկայացուցչին ենք հանձնում վերոհիշյալ գումարի փոխանցման մասին հայտագիրը»:

Եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանը երախտագիտություն հայտնեց Հայաստանի իշխանություններին և ժողովրդին՝ եզդիների մտահոգությունները կիսելու, խնդիրը միջազգային

առյաններում բարձրացնելու և ծանր պահին եզդի ժողովրդի կողքին կանգնելու և օժանդակություն ցուցաբերելու համար:

Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Բրեդլի Բուզետտոն իր խոսքում ողջունեց Հայաստանի մարդասիրական քայլը և համերաշխությունը՝ ցեղասպանության սպառնալիքի առջև հայտնված Իրաքի փոքրամասնությունների հետ: ՄԱԿ-ի մշտական համակարգողի խոսքերով, Հայաստանի մասնակցությունը ՄԱԿ-ի մարդասիրական գործունեությանն ի ցույց է դնում Հայաստանի կարեւոր դերակատարությունը՝ որպես միջազգային հումանիտար հանրության անդամ: Նա վստահեցրեց, որ ՄԱԿ-ը անում է հնարավորը՝ Իրաքում բռնություններից տուժածների հոգսը թեթևացնելու և նրանց օժանդակելու համար:

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցիչ Քրիստոֆ Բիերվիթը բարձր գնահատեց Իրաքի եզդիներին օժանդակելու Հայաստանի որոշումը, որը կարեւոր ներդրում է՝ տեղահանվածներին օգնելու գործում:

Ադրբեջանական կողմը թաքցրե՞լ է Հայաստանի ձերբակալված քաղաքացուն

Ադրբեջանի պաշտոնական իշխանությունները հայտարարել են Հայաստանի քաղաքացու ձերբակալման մասին: Հիշեցնենք, որ ադրբեջանական լրատվամիջոցները այդ մասին տեղեկություն էին տարածել օգոստոսի 26-ին: Այս հարցով պաշտոնական տեղեկատվությունը ստացվել է այսօր՝ սեպտեմբերի 1-ին:

Ադրբեջանի ՊՆ հաղորդագրության համաձայն՝ «Հայաստանի 53-ամյա բնակիչ Սարգիս Նորիկի Անանյանը օգոստոսի 26-ին ապօրինաբար հատել է Հայաստանի և Ադրբեջանի միջև պետական սահմանը»:



«Անանյանը սահմանը հատել է Ղազախի շրջանի Քերիմի գյուղի շրջանում և ձերբակալվել Ադրբեջանի ՉՈՒ-առաջնային գծի զորամասերից մեկի զինծառայողների կողմից», -ասված է հաղորդագրությունում: Որպես բացատրություն բերվում է դժգոհությունը Հայաստանում սոցիալական իր վիճակից:

«Հայաստանի ձերբակալված քաղաքացին ներկայումս գտնվում է բժիշկների հսկողության տակ, նրա հետ վարվում են կանոնների համաձայն, որոնք սահմանված են

միջազգային իրավունքով», -ասված է Ադրբեջանի ՊՆ հաղորդագրությունում:

Հայկական կողմը ստուգում է տեղեկատվության հավաստիությունը, պարզում ձեռքակալվածի ինքնությունը:

Սակայն, ադրբեջանական լրատվամիջոցների և ՊՆ-ի հաղորդագրություններում անհամաձայնություններն ներկայացրին որպես «դիվերսանտ», հետո նա «վերածվեց» դժգոհ քաղաքացու: Սկզբում ասվում էր, որ ՀՀ քաղաքացին մտել է գյուղ, այնտեղ մնացել 20 րոպե, որից հետո միայն ձեռքակալվել գինվորականների կողմից: Իսկ հիմա պաշտոնական տեղեկատվության մեջ ասվում է, որ նրան հենց սկզբից ձեռքակալել են գինվորականները:

Բացի այդ, եթե Անանյանը մեկ շաբաթ է գերության մեջ է գտնվում, իսկ ադրբեջանական պետական մարմինները լռել են, հետևաբար Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին թաքցնել գերության փաստը: Անցյալում հայտնի են դեպքեր, երբ Ադրբեջանը երկար ժամանակ հերքում էր իր տարածքում հայ գերու գտնվելու փաստը, համապատասխանաբար, գերու մոտ չթողնելով Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչներին: Օգոստոսի 7-ին Չինարի գյուղի բնակիչ Կարեն Պետրոսյանն անմիջապես «դիվերսանտ» հայտարարվեց: Օգոստոսի 8-ին ադրբեջանական կողմը հայտարարեց գերու մահվան մասին:

Ամուլսարի ծրագրի վտանգների և գնդեվագիներին խոստացած միլիոնների մասին



Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման և ցիանային ֆաբրիկայի կառուցման նախագծով ուրվագծվում է Մեւանի հարցը նախագծից դուրս բերելու անմիջական միտումը: Այս մասին «ԷկոԼուրի» հետ զրույցում ասել է «Էկոիրավունք» ՀԿ-ի նախագահ, իրավաբան Արթուր Գրիգորյանը:

«Մեւանի մասին ընդհանրապես ոչինչ նշված չէ: Նշված է Ռոտտանի ջրհավաք ավազանը, նշված է Արփայի ջրհավաք ավազանը, Դարբեի ավազանը, բայց ոչ Մեւանի: Երբ այդ ուսումնասիրությունն իրականացրած կազմակերպության ներկայացուցիչն հարցրեցինք՝ արդյոք դա նշանակում է, որ Մեւանի վրա չի լինելու ազդեցություն, վերջնական պատասխանը եղավ՝ ոչ, Մեւանի վրա ազդեցություն չի լինելու: Ընդ որում, իրենց պատասխանն այնպիսին էր, որ որոշակիորեն փոփոխվել է հարթակի և լցակույտերի

տեղադիրը, բայց խնդիրը միայն հարթակն ու լցակույտերը չեն, այլ ամբողջ նախագիծը՝ սկսած բացահանքի շահագործման փուլից, վերջացրած լցակույտերով և տարրավազման հարթակով», - նշել է Ա. Գրիգորյանը:

Նրա խոսքով՝ սա ենթակա է իրենց մասնագետների կողմից լրացուցիչ վերագնահատման և հիմնավորման, որ իրականում Մեւանի վրա ազդեցություն կա, և այդ տարածքը Մեւանա լճի ջրհավաք ավազանն է:

Ամուլսարի ծրագրի վերաբերյալ օգոստոսի 25-ին ՀՀ Վայոց ձորի Գնդեվագ համայնքում տեղի ունեցած հասարակական խումբների ժամանակ իրավաբանը բարձրացրել է ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների հարցը:

«Երբ հարց հնչեցվեց, որ այնտեղ գրանցվել են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներ, պատասխանը եղավ այն, որ մոտ մեկ ամիս առաջ՝ հուլիս ամսին, կառավարությունն ընդունել է ինչ-որ որոշում, որը թույլ է տալիս այդ բուսատեսակները տեղափոխել: Եթե կա այդպիսի որոշում, ապա ինձ համար բացարձակ ակնհայտ է, որ կառավարությունն աշխատում է ոչ միայն հեշտացնել հանքարդյունաբերության ոլորտը օրենսդրական արգելքներից շրջանցելու ուղղությամբ, այլ կոնկրետ այս նախագծի ուղղությամբ, որ կոնկրետ այս նախագծի շրջանակներում առկա խնդիրները աստիճանաբար վերացվեն: Իսկ կենդանական աշխարհի մասին ոչինչ չասվեց», - ասել է Արթուր Գրիգորյանը:

Իրավաբանի բարձրացրած երրորդ հարցը վերաբերում էր հենց Գնդեվագ համայնքին. «Համայնքի բնակիչները մեզ ասել են, որ այստեղ հսկայական փողեր են պատրաստվում տրամադրել՝ գնելով համայնքի բնակիչների հողերն ու այգիները: 5 տարեկանից բարձ մեկ ծառը արժե 300 000 դրամից ավել: Մարդիկ կան հազարից ավելի ծառեր ունեն... այսինքն այդ մարդիկ մոտավորապես մեկ միլիոն դոլար փող են ստանալու: Ես չեմ հավատում, որ այս ընկերությունը, կամ որեւէ հանքարդյունաբերական ընկերություն պատրաստ է գյուղացուն վճարել մեկ միլիոն դոլար իր այգու և իր հողի դիմաց: Նման բան Հայաստանում չի եղել», - նշել է Արթուր Գրիգորյանը:

Գնդեվագ համայնքում ամենամեծ այգիներ ունեցող անձը Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանն է, ով սկզբնական շրջանում դեմ էր Ամուլսարի հանքավայրի շահագործմանը, սակայն այսօր քաղաքապետը բավական լավատեսորեն է տրամադրված:

«Ես առաջիններից մեկն եմ եղել, որ բարձրացել եմ սարը, դեմ եմ եղել այդ նախագծին մինչև ուսումնասիրելը և մինչև հասկանալը՝ ինչ է կատարվում: Մենք հնարավորություն ունենք աշխատանքի ընթացքում էլ դադարեցնել: Ես բազմիցս ասել եմ. ես կլինեմ առաջինը, եթե մի աննշան այս նախագիծը խանգարի իմ համայնքին, ես նորից բարձրանալու եմ սարը, դառնալու եմ գործարանին դեմ», - ասել է Ջերմուկի քաղաքապետը:

Նալբանդյան. Այսօր դժվար է ասել, թե երբ Էրդողանը կարձագանքի Սարգսյանի հրավերին

Այսօր դժվար է ասել, թե ե՞րբ և ի՞նչ որոշում կկայացնի Թուրքիայի նախագահ Էրդողանը գալիք տարի ապրիլի 24-ին Երևան այցելելու կապակցությամբ: Այս մասին, այսօր՝ սեպտեմբերի 1-ին, «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում նշել է Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

«Դեռ ժամանակ բավական կա: Դուք գիտեք, որ երբ որ << նախագահի կողմից Թուրքիայի նախկին նախագահը հրավիրվել էր ֆուտբոլային խաղին, հրավերը ուղարկվել էր մայիսին, իսկ պատասխանը եկավ սեպտեմբերին, այսինքն՝ 4 ամիս անցել էր, եւ պատասխանը եկավ ֆուտբոլային խաղից երկու օր առաջ միայն: Թե որոշումը իրենց կողմից երբ կընդունվի, դժվար է ասել, եւ ինչ որոշում կլինի, դա թուրքերը պետք է ասեն», - ասել է Նալբանդյանը:

Մեր բանակի շնորհիվ այսօր լայնամասշտաբ պատերազմի հենք գոյություն չունի. ՊՆ



Ռազմադաշտում մեր բանակի հաջողությունների տրամաբանական շարունակությունը դարձավ ՌԴ-ում անցկացված համաշխարհային տանկային բիաթլոնում հայ տանկիստների փայլուն ելույթը, որը հիացրեց ու ուրախացրեց ոչ միայն մեզ, այլեւ անակնկալի բերեց շատերին: Այս մասին, այսօր՝ սեպտեմբերի 1-ին, Գիտելիքի օրվա առթիվ իր ուղերձում նշել է պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

«Եկան աշխարհի հզորները, ռազմաքաղաքական խոշորագույն խաղացողները, միջուկային զենքին տիրապետողները եւ միլիոնից ավելի բանակ ունեցողները, եկան նաեւ մի փոքրիկ երկրից մի խումբ տղաներ եւ բոլորին ստիպեցին խոսել իրենց մասին, իրենց երկրի ու բանակի մասին: Դեռ երկար կհիշվի այս հաղթանակը, եւ սա հայոց զինված ուժերի մեծ ու անզին ծառայությունն է հարազատ ժողովրդին: Սա նույնպես վկայում է հայոց բանակում գիտելիքի «իշխանության» մասին», - ասել է նա:

Սեյրան Օհանյանի խոսքով այս օրերին մեր երիտասարդները հնարավորություն ունեցան կեղծ հեղինակություններին տարբերելու իսկական հերոսներից, ովքեր համեստ ու լռելային, առանց ցուցադրական դրսեւորումների, գտնվում էին մարտական գործողությունների կիզակետում:

«Հասկացան, որ նրանք են համարձակության, արիության ու հավերժական արժեքների կրողները: Այդ օրերին մենք բոլորով ապրեցինք մեր բերդ ամրոցի՝ Հայկական բանակի գրված ու չգրված օրենքներով եւ կարողացանք Հայրենիք պաշտպանել: Չինվորական արժեհամակարգը վեր դասվեց տղամարդկության ու պատվի մասին կեղծ ու ձեւախեղված, հաճախ կիսաքրեական ըմբռումներից: Որովհետեւ հայացքներ ունեցողները դժվարին պահերին թաքնվում էին թիկունքում: Իսկական հերոսները զինվոր ու սպա միասին էին, մի բռունցք ու մի ամբողջ:

Իսկ հակառակորդը, դառը դաս ստանալով, դեռ գտնվում է շոկի մեջ: Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարության ջանքերի շնորհիվ գոյալ առումով այսօր լայնամասշտաբ պատերազմի հենք գոյություն չունի: Բայց կրկնում եմ՝ յարվածությունը պահպանվելու է, որովհետեւ կույր ու անգոր վրեժխնդրության տրամաբանությամբ առաջնորդվող թշնամին մեր պաշտպանությունում օր ու գիշեր թույլ հատված է որոնելու՝ հերթական արյունալի սադրանքով բարձրացնելու համար ադրբեջանական բանակի առավել քան ցածր մարտական ոգին ու արդարանալու իր ժողովրդի առջեւ: Դրա համար էլ յուրաքանչյուր մեզ վստահված տեղում պիտի առավել քան զգոն եւ ուշադիր լինենք, բացառենք ամենափոքրիկ իսկ թերացում: Հակառակորդը հասկանում է միայն ուժի լեզուն, եւ միայն յուրաքանչյուր հենակետում նրան Հայկական բանակի ուժի հստակ ցուցադրումն է Հայաստանի Հանրապետության ու Արցախի պաշտպանության եւ հաղթական զինադադար պահպանելու միակ երաշխիքը», - ասել է նա:

Չինաստանի կոմկուսի հրավերով Գագիկ Ծառուկյանը մեկնել է ՉԺՀ



Չինաստանի ժողովրդական հանրապետության Կոմունիստական կուսակցության հրավերով սեպտեմբերի 2-ից 6-ը Գագիկ Ծառուկյանի գլխավորությամբ Չինաստան է մեկնել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատվիրակությունը:

ԲՀԿ մամուլի ծառայությունից հայտնում են, որ պատվիրակության կազմում են պատգամավորներ Վարդան Օսկանյանը, Նաիրա Չոհրաբեյանը, Վահե Հովհաննիսյանը, Միքայել Մելքոնյանը: Այցի շրջանակներում նախատեսված են մի շարք հանդիպումներ ՉԺՀ Կոմունիստական կուսակցության քաղաքային, կուսակցության ղեկավար մարմնի ներկայացուցիչների, ինչպես նաեւ գործարար շրջանակների հետ:

Մեղրիի մաքսակետում կանխվել են թմրամիջոցի ապօրինի տեղափոխման մի շարք փորձեր

Ֆինանսների նախարարության նախաքաղաքական հսկողության վարչությունը Մեղրիի մաքսակետում 2014-ի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում մաքսային կանոնների խախտման 12 դեպք է հայտնաբերել, որոնց մեջ գերակշռել են թմրամիջոցի ապօրինի տեղափոխման փորձերը:

ՀՀ ՖՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից հայտնում են, թեհունվարին բեռնատարի

կցորդում հատուկ հարմարեցված թաքստոցից շուրջ 1 տոննա «հերոին» տեսակի թմրամիջոցի բացահայտումից հետո վարչության աշխատակիցները շարունակել են հետևողական վերահսկողությունը՝ կանխելով մի շարք այլ փորձեր:



Ընդհանուր առմամբ Մեդրիի մաքսակետով 11 դեպքով հայտնաբերվել է ավելի քան 3կգ թմրամիջոց: Հիմնականում Իրանի քաղաքացիներ, դիմելով տարբեր հնարքների, գրպանում, դրամապանակում, ուղեբեռում, ճամպուռում թաքցրած փորձել են տարբեր տեսակի թմրամիջոցների նմանվող զանգվածներ ներկրել: Վարչության աշխատակիցների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումներով օրերս էլ Իրանի մի քաղաքացու պայուսակից հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված, պոլիէթիլենային թաղանթով փաթեթավորված 3 կտոր մուգ շագանակագույն ավիոնանման զանգված՝ 127 գրամ ընդհանուր քաշով: Մեկ այլ դեպքով էլ Իրանի մի քաղաքացու պատկանող ավտոմեքենայի զննմամբ վարչության աշխատակիցները հատուկ հարմարեցված թաքստոցներից հայտնաբերել են ընդհանուր 2.6կգ մուգ կանաչ գույնի, չոր կանեփանման զանգված եւ ավելի քան 500 գրամ տարբեր տեսակի թմրամիջոցներին նմանվող զանգվածներ:

Արցախ

Ամարասի Սբ. Գրիգորիսի մատուռ- դամբարանի պեղումների նոր բացահայտումները

«Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ կազմակերպությամբ, օգոստոսի 4-18-ին պեղման ու ուսումնասիրման աշխատանքներ են իրականացվել ԼՂՀ Մարտունու շրջանի Ամարասի Սբ. Գրիգորիսի մատուռ - դամբարանի շրջակայքում, Տիգրանակերտի արշավախմբի ղեկավար, հնագետ Հ. Պետրոսյանի ղեկավարությամբ:

ԼՂՀ զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչության փոխանցմամբ՝ հնագիտական հետազոտության ընթացքում արդեն մեկ ու կես մետր խորությունից երևան եկան սրբատաշ մեծ բլոկներով շարված երկու զուգահեռ պատեր, որոնք ամբողջովին համապատասխանում էին ներկայիս եկեղեցու բեմի տակ գտնվող դամբարանի արևելյան միջանցքի պատերի շարունակությանը: Պարզ դարձավ, որ եկեղեցու արևելյան պատից դուրս դամբարանի ծավալային լուծումը միանշանակ ցուցող լուրջ հետքեր են պահպանվել, որոնք վկայում են, որ դամբարանն ունեցել է աստիճանապատ

արևելյան մուտք, իսկ մուտքի ճակատների հիմքին հավասար դրված ուղղանկյուն փորվածքներից դատելով՝ նաև շքամուտք: Պեղումները մի շարք էական արդյունքներ են տվել, այն է՝ մակերեսից 3մ խորության վրա պատերը շրջանցող գետնախարսխի հայտնաբերումը, ինչը հնարավոր դարձրեց հավաստել, որ դամբարանը եղել է ոչ թե ստորգետնյա, այլ կիսագետննափոր: Պեղումներով հայտնաբերված հարյուրից ավելի վաղմիջնադարյան կղմինդրի բեկորները վկայում են, որ կառույցի տանիքը եղել է կղմինդրապատ:



Հաջորդ էական գյուտը դեպի դամբարանախուց տանող աստիճանների հայտնաբերումն է՝ թվով վեց հատ, որը հիմք է տալիս պնդելու, որ ստորին աստիճանը համապատասխանում է կառույցի հատակի մակարդակին: Կարելու հայտնագործություններից է արևելյան մուտքի առաջ ընդարձակ սալահատակը: Հարկ է նկատել, որ վաղմիջնադարյան նույնիսկ ամենամեծ տաճարները շքամուտքերի առաջ նման սալահատակներ չունեն: Արևելյան նման ընդգծված միջանցքն ու մուտքը, սալահատակը հիմք են տալիս ենթադրել, որ Գրիգորիսի դամբարանից արևելք եղել է մեկ այլ, թերևս շատ ավելի կարելու կառույց, որն էլ պայմանավորել է կառույցի արևելյան ձգված միջանցքը, մուտքը եւ սալահատակը:

Պեղումները ցույց տվեցին, որ եկեղեցու արևելյան պատին կից մոտ 3*3մ հատվածը մի անգամ չէ, որ փորփրվել է, իսկ դրանից դեպի արևելք 3 մետր լայնությամբ հատվածը պահպանել է մշակութային շերտերի համեմատաբար անխաթար վիճակը: Այն կարելի է բաժանել չորս ժամանակագրական շերտերի՝ ժամանակակից, 17-19-րդ դարերի, 10-14-րդ դարերի եւ վաղմիջնադարյան, որոնք բնորոշվում են համապատասխան գտածոներով եւ հողի որակի փոփոխություններով: Առանձնակի նշելի են 17-18-րդ դարերի գունագարդ եւ փայլանախշ խեցեղենը, կավե ծխամորճերի բեկորները, 18-19-րդ դարի ապակին, 10-11-րդ դարերի ջնարակապատ խեցեղենի բեկորների գյուտերը:

Նյութը տրամադրել է պեղող արշավախումբը:

Անդրանիկ Միհրանյան. Ղարաբաղյան խնդիրը Քերրիի խելքի բանը չէ



Թող ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին սկզբում լուծի Իսրայելում ճախողման հարցը, «Իրաքի եւ Լեւանտի (Շամի) իսլամական պետության» հարցը, Ուկրաինայում իրավիճակը եւ միայն հետո անդրադառնա Ղարաբաղյան խնդրին: Այս մասին, այսօր՝ սեպտեմբերի 3-ին, Երեւանում լրագրողների հետ զրույցում նշել է ժուսաստանաբնակ քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանը՝ անդրադառնալով Քերրիի Հայաստան այցելելու ցանկությանը եւ ԼՂ հարցում ԱՄՆ հնարավոր ակտիվացմանը:

Միհրանյանի խոսքով՝ Քերրին վստահություն չներշնչող ֆիգուր է: «Ժամանակին նա սենատոր էր, անգամ նախագահի թեկնածու: Դեմոկրատական կուսակցության կողմից, բայց որպես դիվանագետ, ցավոք, վերջին ժամանակներս նա որեւէ հաջողություն չի արձանագրել: Որտեղ այցելել է, իրավիճակը վատացել է: Կարող է, նա ինչ-որ տեղ հաջողության հասնի, նո՛ր գա Հայաստան: Թե չէ՝ այստեղ էլ կարող է նպաստել իրավիճակի վատթարացմանը», -ասել է քաղաքագետը:

Հիշեցնենք, որ ամերիկյան լրատվամիջոցները տեղեկատվություն էին տարածել, որ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին Հայաստան այցելելու ցանկություն ունի, սակայն կոնկրետ ժամկետները հայտնի չեն:

Արեւմտյան Հայաստան

Թուրք ուսուցիչները տեսել են Վանա լճի հրեշին



Վանա լճի հրեշին տեսնողների բանակը համարվել է Դատվանցի մի խումբ ուսուցիչներով, ովքեր այնոմ են, թե լճի ափին հանգստանալու ժամանակ նկատել են հրեշին:

Թուրքական Bitlisnews կայքի փոխանցմամբ՝ Դատվանի դպրոցների մեկի ուսուցիչների մի խումբ Վանա լճի ափին հանգստանալու է մեկնել, որի ժամանակ էլ լճում արտասովոր մարմին են տեսել:

Ուսուցիչները լուսանկարել են տարօրինակ մարմինը եւ այնոմ են, որ իրենց տեսածը հենց Վանա լճի հրեշն է:

Նշենք, որ Վանա լճի շրջակայքի բազմաթիվ բնակիչներ հավատում են, թե տեսել են Վանա լճի հրեշին եւ նույնիսկ նկարահանումներ են իրականացրել, որոնք տեղադրվել են ինտերնետում:

Վանում հայերի կառուցած 400 տարվա տները դեռեւս կանգուն են

Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Վանի Գյուրփընարի շրջանի Ըշըքփընարի թաղամասում 400 տարի առաջ հայերի կառուցած տները զարմացնում են թուրք գիտնականներին:

Թուրքական IHA լրատվական գործակալության փոխանցմամբ՝ Վանի Հարյուրամյա համալսարանի Արվեստի պատմության բաժնի դասախոս, դոկտոր Մեհմեդ Թոփը մասնագետների հետ այցելել է Վանի Գյուրփընարի շրջանի Ըշըքփընար թաղամաս:

Թուրք դասախոսը շեշտել է, որ դեռեւս 400 տարի առաջ հայերի կողմից կառուցած քարե տները ներկայում օգտագործվում են տեղի մուսուլման բնակչության կողմից: «Ուսումնասիրելով հայերի կառուցած տները՝ հետաքրքիր եզրահանգման ենք գալիս, որ դրանք բոլորն ունեն ընդհանուր տիպաբանություն: Նույնիսկ կանգուն են հողից կառուցված այլուրի շտեմարանները:



Գիտենք, որ շրջանում կան հայկական եկեղեցիներ, վանքեր ու գերեզմաններ, բայց տների մասին տեղյակ չէինք», ասել է Մեհմեդ Թոփը:

Վանի Աղթամարի պատարագին այս տարի նաեւ Հունաց պատրիարքն է մասնակցելու

Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում կազմակերպվելիք հերթական պատարագին այս տարի մասնակցելու է նաեւ Հունաց պատրիարք Բարդուղիմեոսը:

Վանի մշակույթի եւ տուրիզմի նահանգային վարչության պետ Մուգաֆեր Աքթուղը հայտարարել է, թե այս տարի Աղթամար կղզու եկեղեցում հայերի կողմից կազմակերպվելիք պատարագին մասնակցելու են մի շարք բարձրաստիճան հոգևորականներ:



Թարնված գանձ. Վանի Չորադիրի եկեղեցու բացառիկ լուսանկարները



Աքթուղը նշել է, թե Պոլստ հայոց պատրիարքարանի կողմից իրենց ուղարկված անունների ցանկում են Հունաց պատրիարք Բարդուղիմեոսը, ասորական ուղղափառ եկեղեցու փոխպատրիարք Ֆիլուքսիոս Յուսուֆ Չեթինը և այլք:

Մուգաֆեր Աքթուղը շեշտել է, թե պատարագի կազմակերպումը և ծրագրի իրականացումը հայերին է տրված, իսկ իրենք միայն ապահովելու են ուխտավորների անվտանգությունն ու նրանց ամենալավ ձեռով ծանոթացնեն Վան նահանգին:

Նշենք, որ Աղթամարի Մուրթ Խաչ եկեղեցում այս տարվա պատարագը լինելու սեպտեմբերի 7-ին:

Էրդողանը չի ցանկանում մնալ հայ ընտանիքից խլված պալատում



Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել է, թե որոշ ժամանակ հետո տեղափոխվելու է նոր կառուցվող նախագահական պալատ, իսկ ներկա պալատ է տեղափոխվելու վարչապետը:

Թուրքական Hurriyet-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի նախագահը նշել է, թե այս պահին իր նստավայրը Չանքայա նախագահական պալատն է, սակայն կառուցման մեջ գտնվող նոր նախագահական պալատը պատրաստ լինելու դեպքում տեղափոխվելու է:

Էրդողանի խոսքով՝ արդեն նոր վարչապետ Ահմեդ Ղավուչօղլուի հետ համաձայնեցված է, որ Էրդողանը տեղափոխվելու է նոր նախագահական պալատ, իսկ վարչապետը՝ Չանքայայի պալատ:

Նշենք, որ ներկայիս Չանքայա նախագահական պալատը 1915-ին խլվել է Քասաբյանների ընտանիքից, իսկ Քասաբյաններին բռնի տեղահանել են Անկարայից:

Թուրքիայի տարածքում գտնվող և մինչ այժմ այցելությունների համար փակ համարվող հայտնի հայկական եկեղեցիներից ևս մեկը հայտնվել է NEWS.am-ի ֆոտոխցիկի առաջ:

Թուրքիայում արևելյան մի շարք շրջաններում, որոնք հեռու են տուրիստական երթուղիներից և երկար ժամանակ գտնվել են քուրդ զինյալների և կառավարական զորքերի բախումների կիզակետում, թաքուն իրենց գոյություն են պահպանում մի շարք հայկական եկեղեցիներ: Այդ եկեղեցիներից է Վասպուրականի Աղբակի գավառում գտնվող Չորադիրի (Մորադիր) Մուրթ Էջմիածին եկեղեցին, որի կառուցումը վերագրվում է 7-րդ դար:

Չորադիրի Մուրթ Էջմիածին եկեղեցու տարածքում է եղել նաև Արծրունիների տոհմական դամբարանը, իսկ հռիփսիմեսատիպ եկեղեցին հանդիսանում է Աղթամարի Մուրթ Խաչ եկեղեցու նախատիպը:





Միջագային

Սիրիայի բանապահպանության նախարար Է նշանակվել հայ Նազիրա Սարգսը



Սիրիայում ձևավորված նոր կառավարության կազմում բնապահպանության նախարար է նշանակվել հայագի Նազիրա Սարգսը: Այս մասին տեղեկանում ենք Հայկաի «Գանձասար» շաբաթաթերթից:

Նրանից բացի՝ եւ 15 նոր նախարար է նշանակվել, սակայն առանցքային 19 նախարարություններում պաշտոնների փոփոխություններ չեն եղել:

Նախարարների խորհրդի փոխնախագահ եւ պաշտպանության նախարար է դարձել Ֆահեդ Ջասեմ ալ-Ֆրեյջը: ԱԳՆ-ն կշարունակի գլխավորել Ուալիդ ալ-Մուալեմը:



Ֆրանսիայի ԱԳ նախարարը պատասխանել է հային. Թուրքիան մեր դաշնակիցն է



Թուրքիան Ֆրանսիային դաշնակից երկիր է, Twitter-ի իր էջում գրել է Ֆրանսիայի արտգործնախարար Լորան Ֆաբիուսը՝ ի պատասխան հարցի, որը նրան ուղղել էր Ֆրանսիայի Չոբանյանի անվան ինստիտուտի հիմնադիր ղեկավար, «Europe & Orient» ամսագրի գլխավոր խմբագիր Ժան Վարուժան Սիրապյանը:

«Nouvelles d'Arménie»-ն գրում է, որ Ժան Վարուժան Սիրապյանը, մասնավորապես, Ֆրանսիայի արտգործնախարարին գրել էր. ««Իսլամական պետությունը» իսլամական ահաբեկչական կազմակերպություն է: Թուրքիան «Իսլամական



պետության» օգնում էր գեներով եւ լոգիստիկայով: Արդյոք Թուրքիան հուսալի՞ դաշնակից է»:

Ի պատասխան Լորան Ֆաբիուսը գրել է. «Կխուսափենք կարիկատուրաներից: Թուրքիան Ֆրանսիային դաշնակից երկիր է»: Այնուամենայնիվ, նախարարն առայսօր չի պատասխանել հայ գործչի մյուս հարցին. «Երբ դաշնակից երկրի զաղտնի ծառայություններն օգնում են իսլամական ահաբեկչական կազմակերպությանը, պետք է ինքդ քեզ հարց տաս, այդպես չէ»:

Իր մեկնաբանությունն է թողել նաեւ «Le Monde»-ի լրագրող Գիյոմ Գերյեն, որը գրել է. «Քուեի մեթոդ»: Նշենք, «Քուեի մեթոդը» ինքնաներշնչմամբ բուժումն է, այլ խոսքով՝ ինքն իրեն հանգստացնելը:

ԱՄՆ-ում ֆիլմ են պատրաստում Հայոց ցեղասպանության ժամանակ կանանց ճակատագրի մասին

Ամերիկյան Ֆլորիդա նահանգի հանրային հեռուստատեսությունում աշխատող գրող, ռեժիսոր եւ պրոդյուսեր Բարեդ Մարոնյանը «1915 թվականի կանայք» վերնագրով փաստագրական ֆիլմ է պատրաստում: Այս մասին գրում է «The Armenian Mirror-Spectator»-ը:


